

Յաւիտենական հանգիստ բարեսիրտ և առատաձեռն զոհի ոսկորներին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԲԱԿՅ-ի խմբագրութեան: Ռուսերէն թերթերի խմբագրութիւնները տեղական ազգերի կեանքի և գրականութեան մասին լռուածներ տպագրելիս պէտք է աջադիտի աշխատակիցներ հրաւիրեն, որոնք զերծ լինեն տեղական-կուսակցական մոլութիւններից:

Ձեր աշխատակից «Adora»-ն մոլորեցրել է ձեր թերթի ընթերցողներին «Լուսման» անուանելով «կիսակրօնական», «կէսաշխարհային թերթ» (ԲԱԿՅ № 34), որպէս զի «Սերոպական» համարուի «Մուրճը»: Իբրև պաշտօնակից խորհուրդ ենք տալիս Ձեզ՝ հրաւիրել աւելի անաչառ և բարեմիտ քննադատ, որ գրականութեան մասին խօսելիս՝ առաջնորդուի ճշմարտութեամբ և ոչ թէ «համախոհութեամբ»:

Ն. ՆԱԽԻՋՆԻԱՆ. Մ. Վ.—Ներկայ համարն արդէն կազմուած պատրաստ էր, երբ ստացանք Ձեր երկու թարգմանութիւնները: Մէկը միաց անտիպ:

ՄԵՐ ԳԱՆԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ.— Գօրկիի վէպիկներից այնքան շատ թարգմանութիւններ կան հաւաքուած խմբագրութեանս մէջ, որ խնդրում ենք ալը հեղինակից առ ալժմ նոր թարգմանութիւններ չուղարկել:

Ա. ԱԲ. Ձեր բանատեղծութիւններ չեն կարող տպուիլ:
ԲԱԳՈՒ. Ա. Գ. Գօրկիի «Արխիպ պապը և Լենկան» ստացանք կտպուի:

ԲԱԳՈՒ. Գ. Լուսինեան: Յօդուածը ստացանք. կաշխատենք տպագրել հետեւի համարում:

Կ. ՊՈԼԻՍ. *^o-ին. «Յովսէփի կաթ. Հողոցմեցի» ստացանք. կտպուի հետեւի համարից:

ՄՈՍԿՈՒԱ. Ղ. Փ. Խմբագրութիւնը համաձայն է Ձեր վերջին առաջարկութեան: Կոդուածները կտպուին հետզհետէ:

ՂՈՒԲԱ. Խ. Ք. Փանեանց.— «Լուսմար»ում քարոզներ չենք տպում:

ՄՈՍԿՈՒԱ. Վահան տէր-Գրիգորեանին: Ձեր թարգմանութիւնը չի տպուիլ: Դուք աւելի չգիտէք ալը խնդրի նկատմամբ, քան գրաքննական ատեանը:

ՎԱՀԱՐՇԱՊԱՏ. Կ. Խ.—«Գաղթական կիւնը» ստացանք:

ԹԱՎՐԻՋ. Ս. Ղ.—«Նզի պանիրը» ստացանք:

Խմբագիր-հրատարակիչ ԳԻՒՅ Ա. ԳԱՀ. ԱՂԱՆԵԱՆ
